


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

ՆԱԼԻՆ ԿԱՐ ՈՐ ԵՒ Լ ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ ԵՒ ՈՒՂՂԱՆ ԱՆ

ՏՃՕՐԻՆ. ԱՐՇԱՒԱՅՍ ԼՐԱԳՐԻ
ԳԱԶԻՐԷ (ՓՈՍՏ ԱԵՍՏՐԱՆԻՐ)

E. TOROSSIAN
Direct. propr. du journal arménien
ARCHELOUICE
LE CAIRE (ÉGYPTÉ)

Posta-rogante



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԱՐՄԵՐ	
Տարեկան Ֆրանկ 20	
Վեցամսեայ » 12	

ՔԱՄԱՆՈՐԴԱԳԻՐԸ ԿԱՆՍԻԿ ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՇԱՐԱԹ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՎՐԱՅ :

Խմբագրութեան ուղղուած գրութիւնք և՛ չ'են սրուիր:

ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԷ
Կանխիկ վճարելի են

ԱՆԳԼԻԱՅԻՆ ՏԿԱՐ ԿՈՂՄԸ

Անուրանալի իրողութիւն մըն է թէ՛ այժմ ազգաց մեծամասնութեան զգացումը հակաբրիտանական է: Չէ թէ միայն այն ազգերը, որոց շահերը արամագծապէս հակառակ են Բրիտանական շահոց: չէ թէ միայն անոնք որ անցեալին մէջ Անգլիացիներէն փաստաւ ըլլալով այժմ պատեհութիւն գտած են իրենց վրէժխնդիր զգացմանց ազատ արտայայտութիւն տալու, այլ նաև անոնք որ բոլորովին չեզոք դիրք մը ունին, որ բնաւ պատճառ մը ունեցած չեն անգլիացիներէն ցաւելու, բուն ատեղութեամբ մը կ'ատեն զանոնք և անոնց պարտութեանց և անյայտութեանց վրայ կուրախանան:

Ի՞նչ է այս ատեղութեան պատճառը: Լոկ նախանձը չէ որ անգլիացիները ատելի կ'ընէ ազգաց մէջ: որովհետև մինչ կան ազգեր որ արդարև կը նախաձին Բրիտանական յառաջդիմութեան և զօրանալուն, կան ուրիշներ ալ, որ առիթ չ'ունին նախանձելու, իրենց և անգլիացոց մէջ եղած սարբերութիւնը չափազանց մեծ ըլլալուն:

Այն ազգերն որ չ'ունին իրենց ազգային ծրագիրներուն մէջ աշխարհակալութեան գաղափարը չեն վրդովիր Անգլիոյ նոր երկիրներ գրաւելու լուրերէն: Կարծեմ այս անտողովրդականութեան հիմը կրնանք գտնել անգլիացոց նկարագրին մէջ:

Անգլիացիք բոլոր ազգերէ աւելի անձնապատան են: անշուշտ անձնապատանութիւնը գէշ յատկութիւն մը չէ, թէ՛ ազգաց և թէ՛ անհատից համար: բայց երբ չափը ու սահմանը կ'անցնի, անձնապատանութիւնն ապուշ յատկութեան և ատելի գոռոզութեան ձևը կ'առնէ, որ անտես ու զանց կ'ընէ այն միջոցները որով միայն կարելի է իրական գերազանցութիւն շահիլ և պահպանել:

Անգլիացոց բանակցութիւնը Պօէրնբուրո հետ, Պ. Քրուկէրի վերջնագրէն առաջ կը մատնէ չէ թէ միայն անհամբերութիւն, այլ նաև անպատրաստութիւն, անհեռատեսութիւն և արհամարհանք, որ ծագում առած էին ազգային գոռոզութեան յոռի ունակութենէն: Անոնք կը կարծեն, նախնի փիւնիկեցոց նման թէ իրենք գերազանց են աշխարհի վրայ: Այս էր պատճառն որ

անգլիացիք առանց գիտնալու իրենց թշնամեաց զօրութիւնն, առանց ծանօթացած ըլլալու պատերազմի դաշտին տեղագրական հանգամանքներուն, առանց հաշուած ըլլալու առաւելութիւնը հեծելազօրաց ընդդէմ խիստ դիւրաշարժ թշնամույ մը, կուրի բռնուեցան որուն հետևանքը հազարաւոր կեանքեր կորսնցնել: բարոյական անհաշիւ փաստներ ընել յետոյ, այսօր տակաւին այդ մեծ կայսրութեան վրայէն վտանգի երկիրը չէ փարատած:

Այս աղետալի պատերազմը նոր սկսած ատեն անգլիացոց ընդհանուրին բերանն « մեր յաղթական մուքը ի Բրեթորիա » խօսքն էր: Այսօր նոյն ժողովուրդը անձկութեամբ կ'ըստպասէ ի Լէյտոմիթհ պաշարում տասը հազար բրիտանական զօրաց ազատագրման լուրը:

Անոնց անձնապատանութիւնը արգիլեց զիրենք տեսնելու թէ Պօէրնբուրո գտնէ իրենց չափ լաւ պատերազմողներ են: թէ երկար տարիներէ ի վեր ռազմավթերը կը հաւաքեն: թէ անոնց գիրքը նպատաւոր է. այս ամենուն փոխարէն անոնք միայն կը տեսնէին « Բրիտանական քաջասրտութիւնը և Բրիտանական սուրիները »:

Այս նոյն չափազանցեալ անձնապատանութեան արգիւնքն է որ անգլիացիք միւս բոլոր ազգերէ աւելի յետադէմ են լեզուագիտութեան մէջ: Լեզուագիտութիւնը չէ զարգացած Անգլիոյ մէջ այն ակնկալութեամբ թէ՛ անոնք որ գործ ունենալ կ'ուզին իրենց հետ, պէտք է անգլիերէն սովորին: Ասոր փաստը քաջած են շատ անգամ: Վերջին անգամ Տէլաիօայի ծոցին մէջ անգլիական զրահաւոր մը, պարունակութիւնը քննելու համար փեցուց գերմանական շոգենաւ մը: և սրով հետևե անգլիացիներուն մէջ չկար մէկը, որ հասկնար գերմաներէն, հրամանատարը խնդրեց գերմանացի նաւագետէն որ թարգմանէ իր նաւուն պարունակութիւնը յայտնող ցուցակը: Ասոր արդիւնքը սա եղաւ որ այդ նոյն նաւը մեծ քանակութեամբ բորակ ցամաք հանեց թրանսվալ զրկուելու համար:

Նաև ի՞նչ է պատճառը մեր մէջ եղած հակակրօթեան ընդդէմ անգլիացոց որ այս օրերս մասնաւորապէս երևան եկած է: Ինչո՞ւ այդչափ ուրախութիւն և հրճուանք ի տես այն հեռագիրներուն, որ կը ծանուցանէ Բրիտանական զինուց պարտութիւնը

բողոքական և երկրագործ ժողովուրդի մը կողմէ, որուն անունը և գոյութիւնը անգամ անծանօթ էր մեզմէ շատերուն պատերազմէն առաջ: Այս հարցմանց պատասխանը պիտի գտնենք նախ այն պատճառին մէջ որ անգլիացիներն ատելի ըրած է ընդհանուր ազգաց մէջ. — Անոնց գոռոզ բնաւորութիւնը:

Մենք միշտ կը բաղդատենք անգլիացիները գաղիացիներուն հետ և վերջինները գերազանց կը գաննենք: Գաղիացիներուն քաղաքավարական ձևերը, տաք արիւն բնաւորութիւնը, շուտ բարեկամանալու յատկութիւնը, անմիջապէս մեր սրտերը կը շահին: Անոնց և մեր նկարագրին մէջ նման հանգամանքները մէկէ աւելի են: Իսկ անգլիացիք իրենց պաղարիւնութեամբը, կղզիացեալ դիրքովը, ուրիշ ազգաց, մանաւանդ արևելցիներուն վրայ ունեցած իրենց ստորին գաղափարներովը մեր ատեղութիւնը կը գրգռեն:

Բայց գլխաւոր պատճառը մեր հականգլիական ըլլալուն Թրանսվալի պատերազմին առթիւ, կը գտնուի այն համոզման մէջ թէ Պօէրնբուրո մեզի նման զրկուած և ոտնակոխ եղած ազգ մըն է իրմէ խիստ զօրաւոր կայսրութեան անողորմ ճիրաններուն մէջ: Ահա այս համոզումը սխալ է. պէտք է ընդունինք թէ անգլիացիք, իրենց բոլոր թերութիւններով և ատելի նկարագրով, իբր տիրող ժողովուրդ մը անիրաւութիւն ի գործ չեն գնեք հպատակ ազգերուն վրայ ի նպաստ իրենց արեւակիցներուն: Անշուշտ ամեն ազգ կը փափաքի և պէտք է փափաքի ազատ և անկախ գոյութիւն մը ունենալ: բայց եթէ հարկը պահանջ ընտրութիւն մ'ընել ազգաց մէջ տիրելու մեր վրայ, ամեն բան ի նկատ առնելով, անգլիական իշխանութիւնը պիտի ընտրենք:

Կրկին Պօէրնբուրո չեն կրնար բաղդատուել մեզի հետ: Այժմ գրեթէ հաստատուած իրողութիւն մըն է թէ Պօէրնբուրո կը պատերազմին ոչ թէ իրենց անկախութիւնը ձեռք ձգելու և զայն ապահովելու համար, այլ ինչպէս որ Պ. Պալֆոր անցեալները ըսաւ, կայսրութիւն մը շահելու համար:

Մեզի համար անհասկնալի ճշմարտութիւն մըն է թէ Թրանսվալի մէջ զրկուողները ոչ թէ Պօէրնբուրո այլ Անգլիացիներն են:

Այս այն դժբաղդ դատերէն մին է, որ արտաքուստ անիրաւր արդար կ'երենայ. միայն անոնք իրողութեան տեղեակ կ'ըլլան որ մտէն կը քննեն: Պօէրներուն երկար ժամանակէ ի վեր տեսած պատրաստութիւնը ցոյց կուտան՝ Անգղիացիները Հարաւային Ափրիկէէն արտաքսելով, Աֆրիքանտըր կայսրութիւն մը հաստատելու փառամըլ ձգտումները:

Մ. Յ. Գ.

Վարժարանի և առանց պատանի թողուած ննջեցեալի մը մասին հետեւեալ գրութիւնը ուղղուած է մեզ ի հրատարակութիւն. իրողութիւնները ստուգապատում և ինչպէս կը տեսնենք, շատ սրտաշարժ են. կը վայելէ որ Ազգ. իշխանութեան վարչները մեծ ուշադրութիւն ընեն այս կարեւոր և օգտաւէտ գիտութեանց և բողոքի ձայներուն:

ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Թէ որպիսի սպառնութիւններ պիտի թողու պատմելէ յետոյ մեր ժողովրդեան վրայ, այդ մասին բան մը չպիտի ըսեմ, և կը թողում ամեն մարդ իր խղճին, իր զգացումներուն բնական հետեւողութեանը մէջ:

Պօլսեցի Միքայէլ Սանճեան անուն ազգայինը արհեստով գրաշար, իր հիւանդութիւնը զարմանելու համար հազիւ կը յաջողի կ'ըսեն կառավարական հիւանդանոցին մէջ ընդունուելու, սակայն մարդ — անգամ մը մտադրած ըլլալով դժբաղդ գաղթականին անուշովը անդամ մ'ալ Գահիրէի հայոց մէջ Գերեզմանատան մոտցուած խնդիրը զարթոցանել — ծիծաղկոտ քրքիչով մը կ'առնէ հոգին մեր հոգեւոր գրաշարին, յանձնելով մարմինը բժշկաց միամիտ քննութիւններուն, որք ըստ իրենց նոր գիւտ մը ընելու համար՝ գիտութեան զեռ ծածուկ չապիկին տակէն, մի քանի քննական պատուածքներ ընելով, յիշեալի մարմինը կը յանձնեն մեր Ազգ. իշխանութեան:

Մեր բարեհամբաւ Ազգ. իշխանութիւնը կզերական թէ աշխարհական, արդէն քաջավարժ լոկ գաղթական բառէն ըրտնել մեռնողի մը դրամական ամբողջ «ցնծացուք»ի պիտեմէն կամ հաւաքածոյն — Սանճեանի համար ալ բնականաբար հարկ չ'տեսնուիր ոչ քահանայ, ոչ գիրք, ոչ Աւետարան, ոչ ժամկոչ և ոչ բարապան. օտեալ մը առատօրէն պիտի բաւէր դժբաղդ մարդուն մարմինը հասցնել մինչեւ Մարմինայի գոց դուռը, յորմէ անդին ժամկոչները գիտէին թէ ի՞նչ պիտի ընէին:

Ճիշդ այսպէս եղած է, որուն այս պատմութիւնը բնաւ չ'պիտի լսէինք եթէ նոյն օրը (Փետր. 1) տեղացի հայ ազգայիններ իրենց ննջեցեալը ունեցած չ'ըլլային:

Մեր այդ ազգայինները զարմանօք կը տեսնեն գաղթական յիշեալ հայուն մարմինը առանց պատանքի, մերկ, առանց լուացքի, աղոտ և արիւնաւոր վիճակի մը մէջ, որուն դէմ բողոքի ու զայրոյթի անհանդուրժելի սրտաշարժութեամբ հազիւ կը յաջողին զժբաղդ մեռեալը թաղել տալ գէթ հաւատացեալի մը այսպիսի պարագայի մը մէջ ընել կրցած բոլոր յաջողակ հոգածութեամբ:

Այս իրողութիւնէն՝ որուն ճշմարտութեանը մինչեւ վերջը վկայող ու հաստատող պատուաւոր անձնաւորութիւններ կան, ինչպէս Յակոբ Գէորգ և Յակոբ Շաքիպէֆէնտիններ, պիտի կրնանք մենք ամբողջ ժողովուրդին մտաբերել տալ թէ որպիսի անխիղճ նիւթապաշտ ու կեղծասէր Ազգ. իշխանութեան մը ձեռքը կը գտնուինք, որուն օրով մեր մեռելները անգամ իբր հաւատացեալ իրենց վերջին միտքարութեանց կը գրկուին. պատանք մը, մի քանի մէթր կտան ալ խնայել՝ որուն դրամն ալ 30 դր. առնուած է եղեր Աղքատախնամի սնտուկէն, ու դժբաղդ վաւակ մը գրկել

իր հողակոյտին վրայ ազօթք մը, «անշարժ եղիցի» մը ըսելու քրիստոնէական պարտքն ալ խափառ մտնալով:

Այս իրողութիւնը կարելի չէ՞ սեպել արդեօք Ազգ. իշխանութիւնէն նոր վրէժ մը դէպ ի ազգին ա բաղդ զաւակները:

Չեմ կրնար ես չ'զարմանալ երբ մեռնողը այսպէս մեռցուելու ու թաղուելու անխղճութեանց անդին, միւս չ'մեռածներն ալ բարոյապէս մեռցնելու քաջութեանն ու հերոսութեանը մէջ օրէ օր կը յառաջանան:

Արդեօք մեր ժողովրդեանց այցելող եզած է մեր Ազգ. վարժարանը:

Է՛հ, Աստուած իմ. վարժարան մը, ուր գրանդ մանկութիւն չ'գիտեմ վարժապետներէն՝ պիտի սորվին թէ վարժապետները մանուկներէն:

Երբ խղճի ու բարոյական պահանջմանց ձայնին մէջ Տնօրէն-դաստուն կը խղճէ, կ'սպաննէ իր մէջ զգացումի թելադրութիւնը լոկ իր հացին կամ ամսականին համար, ու երբ այնքան մանուկներու կրթական գործը ու անոնց մտաւորական սպասուած փայլուն ապագայն կը զոնէ ներկայի մէջ լոկ եսասէր Տեսչի մը կամայականաբարութեան, ա՛լ այդ տնօրէնէն ու վարժապետէն ի՞նչ կարելի է յուսալ:

Ես անձամբ այցելեցի անցեալ օրս Վարժարանի ներքին կիսնքը պատմելու համար մարդ զօրաւոր սիրտ մը ունենալու է, հանդուրժելու տիրող դրութեան:

Յայտնի կերպով աշակերտք և աշակերտութիւնք բնաւ գոհ չեն իրենց համար եղած բոլոր սնօրկնութիւններէն, որոց մէջ ինչ որ կենսական մասերն են առողջապահութիւն, ներքին խնամք ու հոգածութիւն՝ բնաւ չ'կան:

Մարդ այդ վարժարանը ծանօթացնելու համար, պէտք է շատանայ մինակ այսքանով թէ բանտի մը երեւոյթը ունի, որուն ամենը բանտարկեալներն են մեր սիրուն զաւակները ու անոնց անողորմ բանտապանները իրենց դասատուք ու տնօրէնը: Ի՞նչ կարելի է ըսել այդ նորաստեղծութեան ա՛լ՝ որ անցեալ օր տեղի կ'ունենայ վարժարանի մէջ Տեսուչ Էֆի հրամանաւ. «զբա՛մ չկայ»ի պատուակաւ և դասարանը Յի վերածել. մի անմիա հրաշք, որը մեծ յուզման, լացի և ամենանարմալան դժգոհութեան կը հանդիպի աշակերտաց կողմանէ:

Մտաւորապէս 700 ոսկի տարեկան դասատուաց լոկ թոշակ վճարել կրցող վարժարան մը, որ այնքան ծայրայեղ խեղճութեան կը մասնուի. շիտակը ես չեմ կրնար ըմբռնել յայտնի թշնամութեան բացարձակ միտումները մեր ազգին զաւակները այսքան անխղճօրէն սպաննելու համար: Այս եղանակին մէջ ցուրտէն պատասխարուելու հոգը, որ տնօրէնին պարտքն է՝ ու ես զպրոցի կոտորած ապակիները ցոյց տալով՝ նորոգել առաջարկեցի, մերժուեցայ:

Ահա մարդիկ որ գիտեն մերժել, բայց չ'գիտեն հետեւել իրենց բնական զգացումին, որ է չկրցած ըրածէն քաշուիլ ու հեռանալ. գէթ իրենց նախորդներու գնացած ճամբովը ձգել ու հրաժարիլ. բայց արդեօք Տեսուչ Էֆէնտին որու համար կ'ըսուի թէ չ'գիտեր, չ'կրնար, սերտած չէ, ի՞նչ հաճոյք կ'ըզգայ մեր մանուկներու գեղեցիկ ապագայն իւր եսասէր կամքին զոնելով:

Ըստ իս մարդ մը որ հանրային օգտակարութեան մը համար ստանձնած գործին ընդունակը չէ եւ այդ բացարձակ կերպով կը պոսան կը կանչեն իրեն ու կը մեղադրեն, արդեօք ի՞նչ պատճառ եւ դժուարութիւն երեւցած է հրաժարականի ճամբան բռնելէ:

Միթէ գաղտնիք մը կայ ըսենք. բայց ինչ որ ըլլայ պէտք է քննի մ'ալ սպասել մինչեւ որ Տեսուչ Էֆէնտին անգամ մ'ալ իմ գրածներս կարդացած ըլլայ թէ ես ի՞նչ ըսել կուզեմ:

Ս. ՊԻԻԼՊԻԻԼԵԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հետեւեալ նամակն ուղղուած է մեզ, որ ի գիտութիւն մեր յարգելի ազգայնոց հրա-

տարակութեան կուտանք, մեր կողմանէ առանց բ'ու մը աւելցնելու:

... Խմբագիր,

Գրիթէ երեք ամիս առաջ զպրոցի հոգաբարձու Պէյր ապտակ մը իջած էր աշակերտի մը, որուն ցաւը իմն ըլլալով դիմած էի Ազգ. վարչ. Գաղաք. Ժողովոյ, բողոքելով թէ ի՞նչ իրաւամբ զարնուած էր ապտակը եւ ինչ պարագաներու մէջ, եւ որովհետեւ հոգաբարձուն Փաշայի հրամանով զպրոցը վարող կարգուած է եղեր. ուստի ժողովը այս առթիւ քննութիւն բանալու անձեռնհաս ըլլալը յայտնելով, միայն խնդիրը հասկնալ եւ Պէյրեհեանի միջոցաւ Ազգ. Երևաթ. Ժողովոյ յիշել եւ այդ առթիւ ինձ տեղեկութիւն տրուելը որոշեցին: զպրոցի վիճակէն խօսելու առիթը ձեռքէ չի փախցնելու համար, աղաչեցի երկվայրկեան մը շնորհել ինձ, ըսելով թէ՛ ապտակով մը արդարեւ տղան չ'մեռաւ, բայց խնդիրը եթէ աղտակին միայն, ցաւը չուտ կ'անցնէր. զպրոցի սա անկերպարան վիճակը քննութեան առնելով բարեկարգութեան մէջ դնելու հաճեցէք, որպէս զի ցաւը շարունակաբար ծնողները չի յուսահատեցնէ. եւ այս քաղքին համար ներքի չէ որ այսպէս անկերպարան վիճակի մէջ պահուի վարժարանը ի վնաս ազգին եւ ուսանող մանկուոյն:

Այո՛ ըսաւ ժողովը. մենք եւս այդ մասին խորհած ենք եւ ժողովուրդէն աւելի լաւ գիտենք զպրոցին ինչ գէշ և վնասաբեր վիճակ մը ունենալը:

Մենք շատ մօտէն ուսումնասիրած ենք թէ այս ձեւով զպրոց առաջ երթալ կարելի չէ. եւ դուք ալ ծնողներ, հայրեր, պէտք է խստապահանջ ըլլալով գործերը մեզի յանձնել. մենք որ ազգին սիրոյն համար Առաջնորդարան գալով գործերնիս թողած կաշխատինք այդ առթիւ, այսինքն զպրոցը բարեկարգ վիճակի մը մէջ դնելու համար:

Գոհ սրտով մեկնեցայ Առաջնորդարանէն զըպրոցին բարեկարգութեան անհամբեր սպասելով, եւ անա նորութիւն մը որ նմանը բնաւ չէ լուսած, տեղի ունեցաւ անցեալ հինգշաբթի օր:

Հոգաբարձու Պէյր՝ որ այդ ապտակէն ի վեր կարծեմ որք դրած չէր վարժարանը. կուզայ եւ իւր ներկայութեան կը կանչէ Տնօրէնն ու վարժուհին եւ « սա՛ երեք կարգը մէկ պիտի ըլլայ » կը հրամայէ:

Առարկութիւն ներքի չէ. ինչ որ կըսեմ այնպէս, ի՞նչ ընենք փարախ կիօրե գործ(1) այո՛, ա՛յսպէս, ա՛յսպէս . . . ըսելով եւ զպրոցը հրաշք մը գործած ըլլալու գոհունակութեամբ հետը տարած քիկնապանին հետ կը մեկնի . . . :

Գպրոցի Տնօրէնին եւ Օրիորդին յանձնելով խղճի վերջին խայթը, խոցը . . . :

Եւ գիտէ՞ք, Տէր Խմբագիր, ի՞նչ է եղեր Գաղաքական Ժողովին կողմէ պատրաստուելիք ծրագիրը ժողովուրդին ըթին խնդալ ձգձգուելով՝ առանձնաշնորհալ Պէյր իբր հաճոյք. եւ սա՛ զպրոցին բարեկարգութեան սպասող ժողովուրդին ալ իբր վերջին վարձատրութիւն . . . :

Գահիրէ, 17 փետր. 1900 Կ. ԳԵՈՐԳԵԱՆ

ԾԱՆՈՒԻ ԳԱՇՆԱԿ

(Օգագիծն)

Գերմանական ամենայարգի գործարաններու մէկէն ելած, Աոր և ընկեր զաշնակ մը կը վաճառուի արժան գնով:

Ձայն ունենալու փափաքող, ու գնի և այլնի մասին պէտք եղած տեղեկութիւնները ստանալ ուղղութեամբ՝ կրնան գիտել « Արշալույս » ի Խմբագրութեան: 3—3

(1) ամսական վաթսուն ոսկու պիւտեճէ մը կարծենք պզտիկ գումար մը չէ, եթէ լաւ կերպով մատակարարուի: Պէյր՝ փոխանակ բարեւտուողը եւ գործ խնդրողը զպրոց զրկելու, կրնայ քիչ թուով ուսուցիչ պահել եւ լաւ վարձատրել եւ դասերն ալ անոնց վրայ բաշխել: Գպրոցը այժմ 14—16 ուսուցիչ կայ:

ԵՐԳԵՐ-ՎԵՐՔԵՐ

ԱՆՀՈՒՆ ԻՂՁԵՐ

Դ.

Կուզեմ գիշեր մ'ըլլալ սեւ խոր, խաւարչուտ, թոնրնկէց.

Ամպերու մէջ տարածուիլ բռնել երեսն եթերին. Գոցել կապոյտն երկնքին, դէմքը ծածկել Աստուծոյ. Երկնքի մէջ տարածել խօշական ձեռք մ'անհունին. Եանթերու խորը սուգիլ արմատ կազմել շանթերու. Ամպերուն հետ բարկաճայթ բազիլել կողերն սէգ, անյաղթ.

Եանթեր տեղալ աչքերէս, երկնք մ'ըլլալ որոտալ. Փըշել մրրիկ, փոթորիկ վերէն ամպեր նետել վար, Հիմնայատակ դող հանել խախտել հիմունքն աչխարհի.

Կազմել ծաւալ մ'անպարփակ սոսկավիթխար մի զանգուած,

Ծովը ծրծել զեանդել փորիւ մէջը անյատակ, Ու լայնփետիկ բերանով անհուն ալիք դուրս պոթկալ.

Քար քանդ ընել անխընայ բունն այս քակել չարութեան.

Թեւեր կապել ուսերուս վերուստ չափել այդ կամար, Հեծնել վերան աստղերու ճամբայ բանալ դէպ անհունն,

Երկնագաւառաց ճամբորդն ըլլալ, չըջիկն առաջին, Սուր սըլացքով սուրալ միշտ ու չ'առնել կանգ բընաւին.

Ու խուզարկել աստղերու ծոցը թաղուած մութ գաղտնիքն,

Մի նոր երկնի գիւտն ընել, յեղափոխել հինն հիմամբ.

Կըտոր կըտոր բաժնուիլ նետուիլ դէպ նոր սին միջոցք.

Նոր հորիզոն, նոր աշխարհ, կազմել նոր նոր երկրագունտք.

Երկնից կրծքին ոտմբ շարել պատրոյգ ի ձեռն պայթել ոտմբք.

Յեղափոխել երկնքի աստղաճամուկ պարունակն. Հըրիշտակներ թափել վար... Աստուծոյ հետ մարտնչիլ,

Քաջիկ կուռիլ... ? ... թեւաթափ վար խոյանալ.

Վար անյատակ յաւիտեան յաւիտենից յաւիտեանս, Ու չի գտնել բընաւին ոտից համար յենակէտ.

Սահմանս ընել լայն անհունն, Տիտանն ըլլալ Մեծ խոնին,

Ու բարութեան հեղեղներ նետել ցան ցիր գունգերուն.

Այսպէս առկախ յաւիտեանս միջոցին մէջ սըլանալ, Սուր, խենդ իղձերուս նըման խոկմանցըս մէջ մընալ կախ,

Այս է անհուն իղձս, աւա՛ղ :

Աղքատագրիւս ԱՎՈ

Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան առժամեայ նախագահ Արժ. Տէր Սահակ քահանայի կողմէ հետեւեալն զրկուած է մեզ, զոր նոյնութեամբ կը հրատարակենք :

Ի զիտութիւն Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան Պատ. անդամոց եւ մեր սիրելի ժողովրդեան կը ծանուցուի թէ, նոյն ընկերութեան Ընդհանուր ժողովը ի ներկայութեան 66 անդամոց, եւ մեր նախագահութեամբ ՚ի նիստ գումարեցաւ ամսոյս 11ին կիւրակէ օր, Ազգ. Մանկավարժի սրահին մէջ, ուր ՚ի մէջ այլոց ընտրողական մասնախումբի մը հսկողութեան տակ կատարեց ընտրութիւններն իւր Դիւանի եւ Գործադիր ժողովոյ :

Ձեռամբարձ քուէով եւ միաձայնութեամբ ընդհանուր Պատ. ժողովոյ զիւան կազմուեցաւ հետեւեալ կերպով :

Ա. Ատենապետ, Ազն. Տիար Մովսէս Անանեանց
Ա. Ատենադպիր, Մեծ. » Յովհաննէս Սեթեան
Բ. Ատենապետ, » » Գառնիկ Սիրունեան
Բ. Ատենադպիր, » » Մկրտիչ Սասնեան

Իսկ քուէից բացարձակ մեծամասնութեամբ Գործադիր ժողովոյ անդամ ընտրուեցան

Մեծ. Տիարք Գարեգին Իսագուլեան
Լեւոն Ա. Բամպուքճեան
Գրիգոր Աւագեան
Երուանդ Աւագեան
Առաքել Փափազեան
Տիգրան Պուտաղեան
Յարութիւն Մ. Թոշունեան

Որոց ամենին կարողութիւն մաղթելով եւ ողջունելով զՁեզ հայրական սիրով եւ օրհնութեամբ

Մնամ աղօթարար
Նախ. առժամեայ Ընդհ. ժողովոյ
Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան
ՍՍ.ՀԱ.Կ ՔՀԾ. ԱԲՐԱ.ՀԱՄԵԱՆ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: ԿԻՐԱԿԻ 18 ՓԵՏՐՈՒՄ 1900. Rows of numbers: 3763 3932 7869 4049 3847 874, 503 610 614 1312 1612 1754, 2558 2565 2920 3436 3643 4448, 5523 6420 6437 6901 8045 8453, 8471 8764 9924

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎԱԼ. -- Զօրավար Ֆրէնչի վերջերս Գէյթթաուն ըրած այցելութեան նպատակն է համոզել զօրավար Բօլլըրդը որ իրեն 7000 հոգի օգնական զինուոր իրկէ սրպէսզի կարենայ պաշարել Քօլէսպէրկը :

«Թայմզ» ի Լորէնսօ-Մարգէզի թըղթակիցը կ'իմանայ թէ Պօէր զօրագնդեր կը շարունակեն իրենց ազատ երթուղարձը Օրանթի սահմանագլխոյն եւ Նաթալի մէջ :

«Սէնտրէլ Նիւզ» կը հրատարակէ հետեւեալ հեռագիրը 7 Փետրվ. թուականաւ .

«Սթէրքստրում» . -- Պօէրք մէկէն յար-

ձակում մը ըրին զօրավար Քաթաքրի երկու գիրքերուն վրայ : Պատերազմը կը չարունակուի, մանրամասնութիւնք կը պակասին :

«Ուէսթմինիսթր Կալէթ» կ'ըսէ թէ՛ զարձեալ զօրավար Պուլլըրէ լուրեր կը պակասին : Նոյնպէս Նորվէյի կամուրջի մասին տեղեկութիւն չ'կայ :

«Գար, 6 Փետրվ. -- Լորտ Քիչնէր կը յայտարարէ թէ՛ անհիմն է այն զրոյցը որ իբր թէ Հարաւային Ափրիկէ մեկնելէ առաջ տեսակցութիւն մը ունեցած լինի ի Գահիրէ օտար լրագրի ներկայացուցչի մը հետ :

«Պ. Ասքիլիթի վերջերս ճառ մը արտասանեց, որուն մէջ կ'ըսէ. «Սխալ է ըսելը թէ պատերազմին յայտարարութիւնը եւ ասոր յաջորդող աղէտները անխուսափելի էին : Երկու կողմանէ բնրեացակամութիւն եւ ուղղախոհութիւն կը բաւէր՝ խոյս տալու համար այս բոլորէն : Այսու հանդերձ, կը յաւելու Պ. Ասքիլիթի, կառավարութիւնը պատերազմ չէր ուզեր : Պ. Քրիւկէր կրնար առաջը առնել : Պ. Քրիւկէր չ'ընդունեց Սեպտեմբերի սկիզբը եղած առաջարկութիւնները : Անդիական գաղթավայրը արշաւեց եւ բրիտանական հողին մէկ մասը միացուց :

ԱՆԳԼԻԱ. -- «Իմինիկ Հաուզ» Նիւ-Եօրքէն 7 թուականաւ հեռագիր մը ստացած է. որուն մէջ իւր թղթակիցը կ'իմացընէ իրեն թէ՛ Ուաշինկթըն բնակող բարձրաստիճան անձնաւորութեան մը տեղեկացած է որ Ամերիկա հաւանած է Անգլիոյ թողուլ Ալաքայի մէջ ազատ նաւահանգիստ մը, ի փոխարէն Նիքարագուայի հետ նոր զանակցութեան մը : Լորտ Սոլլայէրի եւ Միացեալ Նահանգաց Լոնտոնի զեւպանը Պ. Քօէյը այս մասին բանակցութեան մէջ են եւ քիչ օրէն՝ այս հիման վրայ՝ կ'աւարտեն Ալաքայի սահմանագլխի խնդիրը :

ՖՐԱՆՍԱ. -- Բարիզէ կ'իմացնեն Պարոն Ատոլֆ տը Բոչիլտի մահը, 77 տարեկան, Բիւ Մանսօ, թիւ 45 պանդոկին մէջ : Պարոն Ատոլֆ տը Բոչիլտ -- որ ամառը ժընէվ եւ ձմեռը Բարիզ կը բնակէր -- 12 օրեր առաջ էնֆլուէնձայէ բռնուած էր՝ որուն ձեռքէն չի կրցաւ վերջապէս օձիքը ազատել :

ԱՒՍՏՐԻԱ. -- Պուտաբէշդի համալսարանին ուսուցիչներէն Բրօֆ. Ժիւլ Շուարց վերջերս մեռաւ 61 տարեկան հասակին մէջ : Հանգուցեալը Եւրոպիոյ ծանօթ հելլենագէտներէն մին էր :

ԼԱ ՄԻՉՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՍԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամի նպատակ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ եւ է ընկերութենէ մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԵՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ եւ է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ եւ հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի եւ աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յ'Աղէքսանդրիա :

ԳԵՐՄԱՆԻԱ.—Գերմանիոյ Լոնտոնի գետ-
պան Գոնթ տը Հացփէլտ արձակուրդով
Շուէտ կ'երթայ յսանգարուած առողջու-
թիւնը խնամելու :

ՅՈՒՆԱՍՏԱՆ.— «Գորէսորճնանս Բօյի-
թիք» կ'իմանայ թէ՛ Գերմանական կառա-
վարութիւնը որոշած է Գերմանական բա-
նակէն բարձրաստիճան սպայ մը Յունաս-
տան զրկել իբրև վերին վարիչ Յունական
բանակին : Կիյեօմ կայսրը ինք ընտրած է
եղեր այդ սպան :

—Անտրէ իշխանին ծննդեան 18րդ տա-
րեդարձին առթիւ պալատան մատրան մէջ
պատարագ մատուցուեցաւ : Պատարագին
ներկայ էին երիտասարդ իշխանը և պալա-
տին պաշտօնեաները ու կիները :

—Սպարթայի մէջ կ'ապրի Բօլիզօ կրօ-
թան անուն մէկը՝ այս մահկանացուն ծնած
է 1797ին, որով երկու դարերուն մէջ 18րդ
և 19րդ— ապրելէ յետոյ, հիմա ու 20րդ
դարը կը մտնէ :

Իւր բոլոր զգայարանքները առողջ վի-
ճակի մէջ են : Առանց ակնոցի կը կարգայ-
կատարեալ ախորժակով կը ճաշէ : Խոսք
զաւակներ ունեցած է —որով ըսել է երկու
կը պակսի երկվեցեակ մը լինելու համար :
Իւր աղջիկներէն մին կնութեան տուած է
Պ. Բուսօփուլայի, որ հելլենական խորհրդ-
դարանին մէջ Սպարթայի երեսփոխան է :

ՊՈՒԼԿԱՐԻԱ.— Սօֆիայի մէջ այլ ընդ-
այլը զրոյցներ կը շրջին : անգամ մը լուր
տարածուեցաւ թէ Ֆէրտինանտ իշխանը
Պուլկարիոյ անկախութիւնը պիտի հռչակէ,
և թէ Թուրքիոյ սահմանագլխին վրայի
զօրանոցները նոր ոյժերով զօրացուցած է,
այս վերջոյն կողմանէ ամէն հաւանական
պատահարաց առաջըր առնելու համար, և
թէ Ռուսիա այս ծրագրոյն համամիտ է և
Եւրոպական դիւանագիտութիւնն ալ Պուլ-
կարիոյ ազատ ասպարէզ պիտի թողու եղեր
գործելու :

Հիմա ալ տարբեր լուրեր կը շրջին :
կ'ըսուի թէ Ֆէրտինանտ իշխանը դիտաւո-
րութիւն ունի մտերս Պօլիս այցելելու, և
կը յուսայ որ Սուլթանը —այս չըլած զրոյց-
ներէն ազդուած— Մակեդոնիոյ Պուլկարաց
ի նպաստ կարգ մը դպրոցական կամ կրօ-
նական շնորհումներ ընէ իրեն :

ՏՕՐՈՒՄ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առամեարդ
Ապրիլ Ետե Բուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակուաներ :

Կը դարբնէ վայրկենապէս ակուայի ցա-
ւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր
պատրաստած դեղերովն :


Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակուաներուն տոկոնու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխատուի :

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում,
ամէն օր կէսօրէ ետք ժամը 3—5 :

ՎԱՆԱՌԱՏՈՒՆ ԹԻՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԾ
ՇԱՐԼ.-ՈՊՏԻԻԼ.-ԱՂԻԶ



Թէյի գործածութեան ընդհանրանա-
լովն, թէյի ճաշակն ևս նրբացած է. որով
թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի
արուեստ մըն է որ միայն երկարատե և
ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառու-
թեամբ կ'ստացուի :

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ
է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ
գործառնութեամբ, այս տարի ևս իր մաս-
նաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազ-
մազան և մեծաքանակ ընտիր թէյեր Չի-
նաստանի, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿԱՍ-
ՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ
արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձը-
մեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք
իրենց գերնտիր հոտաւետութեամբ ամեն
ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու
ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի
դիւրամատչելի են :

Թէ Կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար
երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած
վառահութիւնն կը քաջալերէ մեզ առաւել
ևս յարիլ մեր սկզբունքին, որ է՝

Ուզգամօրքիւն Թէյերու սեսակի, կօրի
և զնոց մտաին :

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի
եղած կ'ԱՆԻԻԿ դրամով յանձնարարութիւնք
փութով կը կատարուին :

18 — 50

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔ. ՊԵՏՐՈՍ ՆԻԿՈՂԵՍՈՍ

Տոկուն և մարգարտաչար ակուաներ ու
առողջ լինտեր ունենալն ոչ միայն մարդուս
գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կա-
րենալ ապրելու առաջին պայմանն է : Տիրար
Պետրոս Նիկողեմոս, վկայեալ ատամնաբոյժ,
որ երկար ատեն Բարիզու մէջ ատամնա-
բուժութեամբ զբաղած և արհեստին նորա-
նոր կատարելութեանց խիստ մտէն հետե-
ւած է, այժմ քաղաքս վերադարձած և
էղպէքիյէ Ծրանսէզ վաճառատան ճիշտ դի-
մացի արարողմանին մէջ ատամնաբուժական
աշխատանոց մը հաստատած է, ուր ամեն
օր պատրաստ է իրեն դիմողներն գոհացնել
թէ արհեստին յաջողակութեան և թէ գնե-
րու յոյժ չափաւորութեան տեսակէտով :

Հինգշաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը
3էն 5 ձրի դարմանում :

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐՈՒՆԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌԸ

Օռօգի Պալ վանաւասան Սօտեր, Կաւե-Կի-Պենաթի
Յիւս գլխաւոր

ԵԿԱԻՅՑ ԵՒ ԸՆԿ

ԵԿԱԻՅՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր
յաճախողներէ գտած ընդունելութիւն-
ներէն քաջալերուած, պատիւ ունին յայ-
տարարելու թէ՛ իրենց փոռին մէջ պատ-
րաստուած ընտիր հացերը զուտ և անխա-
ղախ ալիւրէ պիտի ըլլան միշտ :

ԵԿԱԻՅՑ ԵՒ ԸՆԿ թեան փոռին մէջ
զաղրիական, անզղրիական, գերմանական և
յունական հացեր պիտի պատրաստուին,
իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայ-
մանաւ :

ԵԿԱԻՅՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով
պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի
պաքսիմաթներ և այլն :

ԵԿԱԻՅՑ ԵՒ ԸՆԿ թեան եղած յանձ-
նարարութիւնք ամենայն ճշ դուրեւար և
փութով կը կատարուին : 31—50

ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տանեքիւն տարիներ շարունակ կարեւոր լու-
սանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին
ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն
ստացած է :

Պօլսոյ մէջ Ապտիլլահ եղբարց տան, ինչպէս
եւ ուրիշ մի քանի ծանօթ տուներու, քաղաքիս մէջ
վերջին անգամ կէքէճեան գործատան մէջ ամենա-
կարեւոր պաշտօնը վարած, այժմ անհանձնելի գործա-
տողի մը կը հիմնէ Եղպէքիյէ Եարիա Գամիլ Օ-
թէլ ՇէֆէրՏՍԻ Եիշդ Պիմաց թիւ 3 արարթրմա-
նին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսա-
նկարներ, ինչպէս եւ զոճիւր կուլիւնթի ի հարկին :
Ակրանսիւրման բնական մեծութեամբ :

Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով, ու-
րոնք երբէք չեն աւրուիր :

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ
բնական գոյներով վրձնաթիւր :

Իւզաների եւ ջրաների պատկերներ, եւլն :

Լուսանկարի եւ պատկերանութեան վերա-
բերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուր-
քու, օրէկօրքան եւլն :

Իրեն զիմոյ յաճախողներն հանել տուած
լուսանկարներուն հետ միեւնոյնէն գուշաւոր մը
նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է :

Դիմեցէ՛ք և կատարելապէս գոհ պիտի մնաք :

ՓԱՓԿԱԿԵՐԱՅ ԱԶՔԸ ԼՈՅՍ

ԼՕՐԱՆԹԱՃԻ ՕՆԵՆԻԿ

Որ Կ. Պօլսոյ Բերայի Հայկա Չարքաիին մէջ
ընտիր խմորեղէններ պատրաստելով հոշակ հա-
նած է, այս անգամ Ապտիլի Պահականոցին դիմա-
ցի անկիւնը խանութ բացած է եւ կը պատրաստէ
տեսակ տեսակ համեմուտ քաղցրաւէնիք խմորե-
ղէնք ամենամաքուր եւ ընտիր իւզով :

Հոն զիմոյ յաճախողներէն իւրաքանչիւրը
իրենց ճաշակին համեմատ գոհացում պիտի գտնեն :

Հարսանիքներու, երեկոյթներու եւ հրաւեր-
ներու համար պէտք եղած անուշեղէն—խմորե-
ղէնները կը պատրաստէ գոհացնելու պայմանաւ
և դիւրամատչելի գներով :